

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 1929

ԹԻԻ 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԻԹԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՈՐՆ Է ՇԻՏԱԿԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՂԱԶԱՆՔ ՄԸ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

ՇԱԲԱՐ ԵՒ ԱՆՈՐ ՍԽԱԼ ԳՈՐԾԱԽՈՒՄԸ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՌՇՏՈՒՆԻ

ՏՕՔԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՂԷՊ» ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ

Կրօնաբարոյական, կրթական գիտական պարբերականներ.
Տէր և Տնօրէն Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
Պատասխանատու խմբագիր Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական սօկի:

Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է

«ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ»-Ի Դ. ՏԱՐՈՒԱՆ ԲԱԺԱՆՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.
ՎԵՑ ԱՄՍՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Զ'ԸՆԴՈՒՆՈՒՐ:
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՆՈՒԷՐ ՄԸ ԸՆՏԱՆԻՔԻԴ
ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԴ:

ԿԱՐԵԻՈՐ

Կը խնդրուի մեր յարգոյ բաժանորդ-
ներէն, որոնք տակաւին իրենց հաշիւը
մաքրած չեն, որ փութով իրենց բաժ-
նեկիները վճարեն:

Հաւելցի բաժանորդները թող հաճին
վճարել Ազիզիէի եկեղեցիին ժամկէտին,
Պր. Մանուէլ Պօփուկեանի, ընկալա-
ղըրի փոխարէն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Յօդուածները գրել միւսանով
2. Թուղթին մէկ էջին վրայ
3. մաքուր եւ գիւրընթեռնելի

Հակառակ պարագային յօդուածնե-
րը կը մնան անհրատարակելի:

ՍՏԱՑԱՆՔ

ԱՐՏԱԻԱԶԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՏԱԹԵԻ

ԴՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ
ՏՄՐԵՑՈՑԻ Զ. ՏԱՐԻՆ

1930

ՆԱԽԿԻՆՆԵՐԷՆ ԱԻԵԼԻ ՃՈՒ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Դիմե՛ք 1 Տոյս

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՒԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 1929

ԹԻՒ 23

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՈՐՆ Է ՇԻՏԱԿԸ

ԺՁ. դարուն երբ կրօնական բարեկարգութիւնը ծոցեցաւ, անոր կուսակիցները երբեք չկրցան ունէ ժողովի մը յառաջ բերել: Ասոր իբր հետեւանք յառաջ եկաւ զանազան Բողոքական հոսանքներ, որոնք յաճախ իրարու հակառակ եւ թշնամական ընթացքներու հետեւեցան, նոյնիսկ եղան այնպիսի հատուածներ եւ պիտի որոնք ճշմ. թիա քրիստոնէութիւնը միայն իրենց վերապահեցին, ուրիշները դժոխքի եւ սատանայի ծնունդ նկատելով:

Ասիկա միայն այդ դարուն յատուկ երեւոյթ մը չէ: Ամէն կրօնքի մէջ, ամէն տեղ եւ միշտ տեսնուած իրողութիւն մըն է ան: Ներկայիս Սուրբ Հայրութեան մէջ զործող զանազան Հայ կրօնական եղբայրութիւններ, խմբակներ, փրօփականախոթներ նոյն քառասան երեւոյթը կը պարզեն մեր աչքին առջեւ: Պատերազմէն աւելին, մանաւանդ 1921էն ի վեր Հայ Առաքելական եւ Հայ Աւետ. Եկեղեցիներուն այս վերահաստատման կազմակերպական շրջանին, կրօնական զանազան գործիչներ այս վիճակը ջանացեր են եւ տակաւին կը ջանան օգտագործել իշահ իրենց պատկան մարմիններուն:

Անձանօթ տեղերէ եւ անձերէ քու հասցէիդ կրօնական թերթեր եւ տետրակներ կը հասնին: Փողոցներու, խանութներու եւ տուններու մէջ կը հանդիպիս քոյրերու եւ եղբայրներու որոնք կրօնական գրութիւններ կը բաշխեն կամ իրենց վարդապետութիւնները կը քարոզեն, երբեմն հրաւիրելով մարդերը որ իրենց ժողովներ

ընեն յաճախեն: Հայրութիւնը կ'երեւի թէ բարբի դաշտ մըն է զաղափարային եւ կրօնական փրօփականութիւն: Պէտք է ընդունիլ թէ Հայը խորապէս կրօնական էակ է: Եւ պէտք է ընդունիլ թէ այսօր շատ պէտք ունինք կրօնական շինիչ, առողջ գրականութեան եւ կրթութեան տակի քան երբեք: Մեծ փոթորիկէն մաքաւարձ այս խեղահոգները ապրելու համար պէտք ունին այժի, նոր յոյսով, նոր տեսիլով, կեանքի պայքարը նետուելու համար այս բեկորները պէտք ունին մեծ կորովի: Եւ մ'զ կրնայ տալ զայն լաւագոյն կերպով քան Աստուած ինքը: Ներկայիս Հայ կեանքի միակ նաւահանգիստը եկեղեցին է, անոր ոյժի միակ բարձրագոյն աղբիւրը կրօնքն է: Պէտք է կրթել նոր սերունդը առողջ կրօնական գաղափարակութեամբ անոր ապագան փրկելու համար:

Բայց մ'ընէ շիտակը: Ամէն տեղ կը հանդիպիս հակամարտ, իրերամերժ, հին եւ նոր կրօնական հոսանքներու, որոնք բացարձակ ճշմարտութեան միակ քարոզիչները ըլլալ կը յաւակնին: Զանազան նոր կրօնական եղբայրութիւններ, իրենց հետեւորդներուն վրայ բացարձակ չիտանութիւն ունենալու համար արգիլեալ սեյմակին մէջ կը գնեն իրենց չհաստատած գիրքերը, թերթերը, կազմակերպութիւնները եւ այս կերպով յառաջ կը բերեն նեղմիտ մոլիւնանդ ոգի մարդոց մէջ, եւ զանոնք կը վերածեն մարդամեքենաներու:

Ահա այսպիսի կրօնական քառասուն վիճակի մը մէջ յաճախ մէկը չփոթեցնելու կը մատնուի եւ բաւական դժուար կ'ըլլայ իրեն համար ուղի մը գտնել:

Այսպիսիներուն համար կարևոր է նկատի առնել հետեւեալ կէտերը:

1. Բայց սիրտ մը ունեցիր միշտ ճշմարտութիւնը տեսնելու եւ ընդունելու համար, թէպէտ այս չի նշանակեր զիւրահաւանք ըլլալ եւ զուրկ՝ քննական ոգիէ: «Ամէն բան փորձեցէք և ԲԱՐԻՆ ամուր բռնեցէք»:

2. Հետեւաբար մի արհամարհեր ունէ գաղափար միայն անոր համար որ քուկդ չէ, եւ մի՛ պաշտպաներ այն գաղափարը միայն անոր համար որ քուկդ է. յարկ է ունէ անկեղծ գաղափար մը:

3. Բայց զգուշացիր անկէ որ ճշմարտութիւնը միայն իրեն կը սեպհակահանուցընէ, եւ կ'աշխատի ուրիշները միշտ սեւ գոյներով ներկայացնել:

4. Պէտք է միշտ միտք բերել թէ կրօնքը կեանքն է, ապրելակերպ մըն է. եւ կրօնքի մէջ ուղղափառութիւնը կ'որոշուի մաքուր, սիրով, հաւատարիմ, նուիրուող, ծառայող, գործունէութեամբ աւելի քան թէ մաքրին անհատ կընալի գաղափարներու, դաւանանքներու ընդունելութեամբ: Պատուներէն պիտի ճանչնաք գանձնք:

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲՈՂՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Տը Բանկըրկէյէլինէլիսթ» թերթին մէջ այս նիւթին շուրջ գրուած յօդուածէ մը կը քաղենք հետեւեալը:

Ֆրանսայի մէկ միլիօնէ աւելի Բողոքականներուն գործունէութեան առջեւ հետեւեալ դժուարութիւնները կը գտնուին:

1. Գործիչի պակասութիւն: Մեծ Պատերազմի միջոցին բողոքական երիտասարդութիւնը աննման հայրենասիրութեամբ ռազմադաշտը նետուեցաւ, ուր առնուազն 100 հովիւներ եւ զոհուեցան իրենց հայրենիքին համար:

2. Երմտական նեղութիւն: Ինչպէս

բոլոր Եւրոպայի նոյնպէս Ֆրանսայի բողոքականութիւնը կը նեղուի զրամական դժուարութեանց տակ. ան պէտք ունի հարուստ Արեւմուտքի օժանդակութեան:

3. Ֆրանսական բաժանումները մեծապէս կը նուազեցնեն բողոքականութեան ազդեցութիւնը: Բարեկարգեալը, Լուստրականը, Մեթոտականը, Բարեկամները, Փրկութեան Բանակը, Ազատ Եկեղեցին եւ ուրիշ զանազան հատուածներ հոն գործի վրայ են: Ֆրանսայի ներկայ կացութեան մէջ ասոնց զիրար չէզոքացնող գործունէութիւնը ինքնասպանութիւն կը նշանակէ:

Աստուածաբանութեան մէջ բոլոր յարանուանութիւններն ալ ունին իրենց ազատական եւ պահպանողական հատուածները: Բայց բնիւ վարդապետական ըլլալէ աւելի գործնական եւ միութիւնական դարձած է. Ատուլֆ Մօնոյի եւ Պէրսիէի նման քարոզիչներ թէպէտ չըկան, բայց քարոզիչներու ընդհանուր մակարդակը բարձր է: Ֆրանսական բեմին վրայ քարոզախօսութիւնը տակաւին արուեստ մըն է, զերծ տափակութենէ եւ ճապարղութենէ. Ֆրանսայի քարոզիչը իր նիւթը վարպետի ձեռքով կը քաղէ Նոր Կտակարանի եւ քրիստոնէական կեանքի հանքէն: Ահա այս պատճառաւ քարոզիչները խնամքով կը պատրաստուին, որոնք կրօնական նիւթերու մասին դասախօսներ ըլլալէ աւելի քրիստոնէական հաւատքի վարդապետները ըլլալու համար կը կրթուին: Ֆրանսայի քարոզիչները մեծ հոգ կը տանին իրենց երիտասարդներուն կրթութեան: Եկեղեցւոյ անդամակցութեան համար երկամիայ կրօնական դաստիարակութիւն կուտան անոնց: Հեղինակը պաշտամունքի ներկայ ձեւը որդի կը գտնէ Ֆրանսական զգայուն եւ զեղապաշտ ոգիին համար, եւ կը թելադրէ փոփոխութեան ենթարկել զայն:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

«ԱՂԱՁԱՆՔ ՄԸ»

«ՀԱՅ ՔՍՐՈՁԻՉՆԵՐԻ ՄԱՆԱԽԱՆԴ
ԱՐԴԻԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ ՈՒՆԵՅՈՂՆԵՐԷ»
ԻՆՁՈՒ... »

Հետևեալ յօդուածը կը ներկայայնենք մեր ընթերցողներուն աննախապաշար նկատողութեան: Ինչպէս որ պիտի տեսնուի Վեր. յօդուածագիրը դէմ կ'արտայայտուի քանդիչ, հերետիկոսութեան անհաւատութեան մօտեցող արդիապաշտութեան: Պէտք է հոս կրկնել թէ այս երկու բառերը, արդիապաշտութիւն (մատընիզմ) և հիմնապաշտութիւն (ֆրենտմէնթէլիզմ), ամերիկեան ապրանքներ են, ծնունդը այդ երկրին կրօնական կեանքին, եւ հետեւաբար՝ մեզի օտար: Բայց կը ցաւինք որ կարգ մը մարդիկ կը ջանան արուեստականօրէն այս երկու հոսանքները հոս Սուրբոյ մէջ ստեղծել, տգէտ ժողովուրդը շփոթութեան մատնել, անոնց միտքը նախապաշարել եւ լարել՝ իրենց նպատակը յաջողցնելու, այսինքն եկեղեցին քանդելու համար: Պէտք է բաց կերպով յայտնել թէ հոս արդիապաշտութիւն գոյութիւն չունի, անոր գոյութիւնը պնդել իրականութիւնը կեղծել կը նշանակէ: Մեզի անծանօթ կը մնայ հոս Սուրբոյ մէջ ունէ Հայ Աւետարանական քարոզիչ մը որ չ'ընդունիր Քրիստոսի՝ Աստուծոյ Միածին Որդին ըլլալը, Անոր հրաշալի ծնունդը եւ հրաշագործ կեանքը, Անոր քաւչական փրկագործութիւնը, մահն ու յարութիւնը և երկրորդ գալուստը, մարդուն վերստին ծնունդը ևայլն: Ասոնք են այն հիմնական վարդապետութիւնները որոնց վրայ հաստատուած է Հայ Աւետ. Եկեղեցին և անոնցմով ներկայիս կանգուն կը մնայ: Ահա այս իմաստով թունդ հիմնապաշտ են Հայ Աւետ. Եկեղեցին և Մերձաւոր Արեւելի մէջ մեզի

ծանօթ բոլոր քարոզիչներն ու հովիւները: Ասոր հակառակը պնդել կը նշանակէ վանսնք վարկաբեկելու զիջանիլ ժողովուրդին առջև:

Բայց հոս կայ երկրորդ կէտ մը զոր կ'ուզենք յայտնել: Պէտք է սա երկու բաները իրարմէ վանալանիլ, — իրողութիւնը և անոր բացատրութիւնը, ճշմարտութիւնը եւ անոր մեկնութիւնը: Առաջինները անփոփոխ են, իսկ երկրորդները՝ փոփոխական, առաջինները պէտք է ընդունուին այնպէս ինչպէս որ են, իսկ երկրորդները արժէք ունին այնչափ որչափ որ կը համապատասխանեն մեր ներքին կրօնական փորձառութեան, մտաւորական զարգացումին և ժամանակի ոգիին: Ս. Գիրքը, Քրիստոսն ու Աստուածը կան ու կը մնան, Ս. Գիրքը միշտ Աստուածաշունչ մատեան է, Քրիստոսը միշտ հրաշագործ Փրկիչն է, Աստուածը յաւիտեանս սիրող հայրն է մարդկութեան ևայլն, ասոնք անփոփոխ իրողութիւններ, ճշմարտութիւններ են. բայց անոնց մասին մեր ըմբռնումները, քիչ վերը յիշուած քրիստոնէութեան հիմնական վարդապետութիւններու մասին մեր մեկնութիւնները միշտ կը փոխուին եւ պէտք է փոխուին: Ճշմարտութիւնը Աստուածային է, իսկ մեկնութիւնը՝ մարդկային: Աստուածայինը յաւիտեանս անփոփոխ է, իսկ մարդկայինը միշտ փոփոխական և յառաջդիմական: Յաւալի է տեսնել թէ կան մարդիկ, որոնք կը ջանան հիմնական վարդապետութիւններու և աստուածային ճշմարտութիւններու մասին իրենց բացատրութիւններուն և մեկնութիւններուն աստուածային դրոշմ մը տալ, իրենց մտքին ծնունդը եղող մարդկային գաղափարներուն աստուածային հեղինակութիւնը տալ և հոգիներուն վրայ իշխել բացարձակօրէն: Մարդկայինը Աստուածայինին հետ համադաս և հաւասար կերպով իբրեւ բացարձակ անփոփոխ ճշմարտու-

թիւններ ժողովուրդին պարտադրել միզք
մըն է։ ԾՆԹ. ԽՄԲ.

Անցեալ գիշեր բարեկամի մը տունը այցելութեան գացեր էի. հոն խնծի ըսին թէ Օգոստոս 4 թուակիր «Նոր Աւետարեք» ի մէջ Վեր. Կէօվգալայճեանի խնդրանքը իմ անունս ալ կը պարունակէ։ Տեսայ ու կարգացի վայն։ Առաջին անգամ կը չնորհաւորեմ «Նոր Աւետարեքի» ի հրատարակումը և յաջողութիւն կը մաղթեմ անոր։ Կը մաղթեմ որ ան իր անուան տէր ըլլալով երբեք չծերանայ և միշտ ՆՈՐ մնայ և նոր ՆՈՐ Ա. ԻԵՏԻՍՆԵՐ հրատարակող ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ ըլլայ։ Ականջները խօսին մեծարգոյ բարեկամիս Վեր. Կէօվգալայճեանի. այս մաղթանքն ալ արդիականութիւն կը բուրէ։

Վեր. Կէօվգալայճեան «Ռահնիւմա» ի մէջ գրուած իմ յօդուածէս և ալ աւելի «Նոր Աւետարեք» ի մէջ Վեր. Ս. Մանուկեանի գրութենէն ազդուելով կ'ընէ իր խնդրանքը, որ կարճ կերպով ամփոփելով, սա է։

«Փոխանակ եկեղեցիներու և պահպանողական քարոզիչներու յանձնարարելու՝ որ իրենց արդիապաշտ պաշտօնակիցներուն հանդէպ ներողամտ վրանութիւն, արդեօք աւելի լաւ ըրած պիտի չըլլային, եթէ սովորաբար արդիապաշտներու յանձնարարին ՔիՉ ՄԷ պահպանողական ըլլալ, նոյնիսկ իրենց յանձնառած գործին ևս Աստուծոյ Թագաւորութեան սիրոյն համար»։

Յօդուածագրին հետ համակարծիք ենք՝ եթէ իր այս խնդրանքին մէջ նրապատակն է ճշմարտութիւնը ժողովրդին ներկայացնելու մէջ աւելի իմաստուն ըլլալու մասին խրատական մը տալ։ Քարոզիչները միշտ և ամէն պարագայի տակ պէտք է անսան այս խրատին, և այս պարտք մըն է թէ՛ արդիականներու և թէ՛ ձիւնսպաշներու համար։ Ամէն ճշմար-

տութիւն ամէն տեղ չի խօսուիր. ամէն ճշմարտութիւն չի նութեան նպատակով պէտք է յայտնուի և ոչ թէ քանդելու և գայթակղութեան պատճառ ըլլալու համար։

Վեր. Կէօվգալայճեան եթէ «Ռահնիւմա» ի մէջ հրատարակուած յօդուածէս ազդուելով զիս 3-5 արդիամիտներու խումբին մէջ կը դասէ, կը կարծեմ թէ այդ յօդուածիս իմաստը կատարելապէս չէ կրցած ըմբռնել. ես հոն մէկ կամ միւս կողմը ոչ պաշտպանած եւ ոչ ալ դէմ արտայայտուած եմ։ Իմ նպատակս միայն ցուցնել էր թէ ի՞նչ են և ի՞նչ չեն հիմնապաշտութիւնն ու արդիապաշտութիւնը. թէ ո՞ր աստիճան թունդ հիմնապաշտն իսկ արդիական է, ո՞ր աստիճան իրարու հետ բարեկամ են և ո՞ր կէտէն կ'սկսին իրարմէ զատուիլ և իրարու հակառակիլ։ Թէ ո՞ր աստիճան երկուքն ալ օգտակար են և ո՞ր երկուքն ալ անընդունելի հերետիկոսութեան կը հասնին։ Նպատակս էր ժողովուրդը մանաւանդ պարզամիտները այդ մասին քիչ մը լուսաւորել, որպէս զի անդիտակցարար և զուր տեղ իրարու հանդէպ ստեղծութիւն չ'ունեցան են այն անհատները, զորոնք մէկ կամ միւս կողմէն ըլլալ կը կարծեն, որպէսզի եկեղեցիներու և ժողովուրդներու միջեւ փոխանակ սիրոյ հակառակութեան սերմեր չ'ցանեն, որպէսզի «հասէ՞ք, կրօնքը կը քանդուի» ի նման անմտութիւններու առիթ չտրուի։ Ալիւոր պաշտօնակիցս կ'ըսէ թէ արդիապաշտները 3-5 հոգիներ են. մինչդեռ ես կարգ մը տգէտներու բերնէն լսած եմ թէ բոլոր քարոզիչները արդիապաշտ են, «զգուշացէ՛ք անոնցմէ» ըսած են անոնք։ Ասոնք անշուշտ անոնք են որ չեն գիտեր թէ ի՞նչ կը խօսին։

Ամէն հաւատացեալի նշանաբանը պէտք է ըլլայ Աստուծոյ Թագաւորութեան օգոստը. ոչ թէ պէտք է ըլլայ այլ այդպիսի և Հակառակ պարագային մարդը հա-

ւատացող չէ այլ ուրացող: Նախ Աստուծոյ թագաւորութիւնը, և յիշտ... «Արդ թէ՛ ուտէք, թէ՛ խմէք և թէ՛ խնջ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք:» Ա. Կորն. Ժ. 11: «Ամէն բան փորձեցէք և բարին ամուր բռնեցէք:» Ա. Թեո. Ե. 21: «Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ:» Թովհ. Ը. 32: ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ: Ճշմարտութիւնը ծախու առ ևս զայն մի՞ ծախսեր:

Ամէն հաւատացեալ, մանաւանդ ամէն քարոզիչ պէտք է հաւատարիմ մնայ իր պարտականութեան, յիշումին, համոզումին: Առաքելական դարուն մէջ իսկ Պողոս հրապարակաւ յանդիմանեց այն առաքեալները՝ որոնք կ'իզոյժէին վստակութիւն չարունակել թլփառութեան և ուրիշ սովորութիւններու կիրարկումը, պահպանողական հիմն չը հանդիմանէին զարմանքով: Այս վէճը ծաւալեցաւ, այսինքն անոնք կը փափաքէին Քրիստոսի նոր վարդապետութիւնը Մովսիսականութեան հիմնի վրայ մէջ պահել: Այս առաջին արդիապաշտի և հիմնապաշտի վէճը վերջացաւ առաքելական դարուն եկեղեցական առաջին համաժողովին մէջ:

Քիչ մը, «ԱՍՏԻՃԱՆ ՄԸ», թողջտութիւն:

Ամէն բան քննել, ճշմարտութիւնը պրպտել և հրապարակել «Թոյլութեամբ չըլլար», քիչ մը ծածկելով և ծածկուելով կարելի չէ յառաջ երթալ: «Մենք զայն որ տեսանք և լսեցինք՝ չենք կրնար չխօսիլ:» Քրիստոնէութիւնն ու գիտութիւնը այս սկզբունքով յառաջ գացին: Թոնտրակեցիներն ու Պաւլոսեանները Հայ ազգին մէջ 1500 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող արդիապաշտներն են, Բողոքականներն են: Այս պատճառաւ անոնք հալածուեցան, բայց չը լռեցին. անոնք երբ Թրակիա (Բուժ Էլի) քաղաքում ևս ալ շարունակեցին քարոզել և անոնց յանած սերմերէն յառաջ եկաւ

Լուսեր... Ժ. 2. զարու բարեկարգութիւնը Պապական եկեղեցիէն հալածուեցաւ քանզի ան արդիապաշտութիւն էր: Բայց ուրիշ տեսակետէն գիտելով բուն իսկ հիմնապաշտները անոնք էին:

Կալիլէոս, Իտալիոյ փիլաքաղաքին մէջ 1554ին ծնած ազնուական մը և իր ատենին գիտունը, մեծ հռչակ ստացաւ հեռագրապաշտ հնարելով: Գիտական փաստերով ցուցնելու աշխատեցաւ թէ արեւը կ'ըզրոն է և անշարժ, իսկ երկիրը ուրիշ մոլորակներու նման շարժական է, և կը դառնայ թէ՛ իր առանցքին և թէ՛ արեւին շուրջը: Անոր այս նոր գաղափարը Պապական եկեղեցին յուզեց. Վաղիկանի հաւատացեալ պաշտօնեաներուն մէջ իրարանցում յառաջ եկաւ. Կարտինարներու ատենը Պապի հրամանով Կալիլէոսը դատապարտեց իր այս նոր գաղափարին համար: Անոնք ըսին. «Դուն Ս. Գրքի հակառակ բաներ կը սորվեցնես. այս իմաստակութիւններէդ եւ սխալներէդ պէտք է ապաշխարես, որ քեզ կարենանք բանտէն ազատել:» Մերունին Կալիլէոս ատենանին մէջ քաջաբար պնդեց իր գաղափարին վրայ ըսելով, «Եւ սակայն կը շարժի:»

Լուսերի բարեկամները իրմէ խնդրեցին որ Ուօրմզի ատենը չ'երթայ... «Ես պիտի երթամ եւ ճշմարտութիւնը պիտի խօսիմ, եթէ նոյնիսկ Ուօրմզ քաղաքի տանիքներուն կ'ըմբռնեն թիւին չափ սատանաներ զիս զիմառնեն», ըսաւ Լուսեր: Պատճառ, անիկա՝ «արդարը հաւատքով կ'ապրի» աւել տարանական սկզբունքը նոր գտած եւ իր ծարաւի հոգին գոհացուցած էր: Իսկ այս՝ Հռովմէական եկեղեցիին կողմանէ հերետիկոսութիւն նկատուած էր:

Մօրս, որ ասկէ ճՅ տարի առաջ հեռագիրը հնարած էր, ծաղրանքի ենթակայ կ'ըլլար իր ժամանակակիցներէն, որոնցմէ մէկը իր կօշիկը թելին վրայ նետելով կ'ըսէր. «Եթէ այս խաբարն այս

թելի միջոցաւ լուրեր կրնայ հաղորդել, իմ կօշիկս ալ կրնայ Պալթիմօրէն Ուաշինկթըն փոխադրել:»

Սալամանքայի կղերները Կոլոմպոսը դատապարտեցին, անոր՝ «երկիրը կլոր է» գաղափարը Ս. Գրքի հակառակ հռչակելով: Պէտք է օրինակները շատցնել:

«Ութուկ ուլ իւմէ վէլէվ պիսիյն»

—գիտութեան փափաքող եղիր եթէ նոյնիսկ ան Չինաստան գտնուի— կ'ըսէ արարական առածը: Անոնք ըսել կ'ուզէին թէ գիտութեան ճշմարտութիւնները սորվէ նոյնիսկ այն երկիրներէն, զորոնք իբր կեալուր կը ճանչնան իրենք: (Շարունակելի)

Փիլասիոս

Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ (4)

Ժողովրդային միահամուռ փափաքի փառաւոր ցոյց մը, զնահատական լաւագոյն վկայական մը եւ վստահութեան արժանաւոր փաստ մըն էր Մեծն Ներսէսի ընտրութիւնը, իբր Հայրապետ: Նախարարներ, կուսակալներ, զօրականներ եւ ժողովրդական մեծ բազմութիւն մը կը հաւաքուին Արշակ թագաւորի մօտ եւ Կաթողիկոս կ'ընտրեն սքանչելին Ներսէսը: Ներսէս՝ զաւակն էր Լուսաւորչի Վրթանէս որդւոյն հարազատը Յուսիկի, որ ուսմամբ եւ բարեպաշտութեամբ զարգացած կեսարիոյ մէջ, եկած էր Հայաստան եւ կը ծառայէր Հայոց արքունիքին մէջ իբրեւ սենեկապետ եւ գինակիր թագաւորին, բարքով քաղցր, հասակով բարձր եւ զեղադէմ երիտասարդ մը:

Ժողովրդական այդ մեծ վստահութեան եւ խանդավառութեան հանդէպ, բոլորովին հաւնես եւ խոհախան ընթացք մը կը տեսնենք Մեծն Ներսէսի քով: Երբ կը հաղորդուի իր ընտրութիւնը, այլալիւծ եւ պատասխանատուութեան զգացումէն ընկճուած, «անարժան եմ» կը գտնէ, այնքա՛ն բազմակողմանի զարգացումով օժտուած երանելին... բայց ժողովուրդին միաձայն ազադակին առջեւ գլուխը խոնարհած... աչքերը վեր յառած կ'ապաւինի Մեծ Կարողին... որ զինքը քսան տարի վերջ մարդկային

միջոցներով հաւանելի եւ կիրաւելի ծառայութեան բարձրագոյն աստիճանին պիտի հասցնէր:

Մնած 327ին, Կաթողիկոս օծուեցաւ 354ին, 27 տարեկանին, զոր թէեւ ոչ մանրամասնօրէն, բայց հպանցիկ նկարագրութեամբ մը հոս կրկնել անօգուտ չենք նկատեր: Արշակ թագաւոր՝ ինչպէս վերը յիշեցինք, ժողովրդական բուռն փափաքի մը առջեւ մեծ ժողով մը կը գումարէ իր պալատան մէջ, ուր ներկայ կ'ըլլան եկեղեցականներ, զինուորականներ եւ բազմաթիւ բարձրաստիճան անձնաւորութիւնք: Ներսէս՝ անտեղեկ անցուղարձէն, թագաւորի կողքին կեցած էր արքայական սուրն ու կամարը բռնած: Յանկարծ՝ Արշակ բարձրադրակ կը յայտարարէ ազգին կամքը եւ Ներսէսը հայրապետ կը հռչակէ: Ընտրութեան մերժումներուն եւ նոյնիսկ ապագայ խստութիւններու սպառնալիքներուն հակառակ, (որովհետեւ Ներսէս խառնուածքով խիստ, անթեքելի եւ անզրբօրէի նկարագրով օժտուած էր) ժողովուրդէն ոմանք կը վազեն անոր քով, իր ձեռքէն կը խլեն արքայական զինանշանները եւ զրեթէ բռնի կը մերկայեն զայն իր զինուորական զարդերէն ու զանգուր մագերը կը յանձնեն մկրատի (ինչ որ սովորութիւն էր եւ այժմ ալ է մէկը սարկաւազ ձեռնադրելու ատեն)

եւ ծերունի եպիսկոպոս մը՝ անմիջապէս սարկաւագ կը ձեռնադրէ Աստուծոյ ընտրեալը։ Առանց ժամանակ կորսնցնելու, հարկւրաւոր ձիւղորներու եւ տասնեակներով կառքերու թափօրով մը Կեսարիա կը տանին նորընտիր հայրապետը եւ հոն Յունաց Եւսոպիոս արքեպիսկոպոսէն կ'ստանայ՝ աստիճանական բարձրացումով, հայրապետական օծում։

Մեծն Ներսէս Հայաստան դառնալով սկսաւ խորհիլ թէ ինչ բաներու պէտք ունէր ժողովուրդը եւ ինչ միջոցներ կարելի էին, մեղմելու համար ազգային կեանքի կարօտութիւնները։ Հո՞ս իր այս խորհուրդներուն եւ որոշումներուն մէջն էր որ երեւան կ'ելլէ 27 տարեկան անփորձ երիտասարդին իսկական մեծութիւնը հազուագիւտ։ Հայաստան՝ ինչպէս նախորդ յօդուածներով տեսանք, տկար, ներքին եւ արտաքին դժուարութիւններով ընկճուած, անառակ թալաւորներու, քսու եւ բանսարկու նախարարներու ձեռքին մէջ ազազուն գոյութիւն մը դարձած, ռազմութիւն եւ առաջնորդող հեղինակութենէ զուրկ կղերականութեան մը ձեռաց տակ մոլորած եւ պառակտած, իր անկման պատրաստութիւնները կը յօրինէր, իր իսկ ձեռքով։ Հզօր միտք մը՝ թերեւս փրկէր զայն այս կացութենէն ողբալի... Հզօր, անաշու եւ անվախ ձեռք մը... եթէ իշխանութիւնք եւ ժողովուրդ հանդուրժէին այդ ազատարարին... այդ տիտան միտքին...։ Եթէ անմիտ ամբիւր վաղը չխաչէր, այսօր ովսանաներով փառաւորածը...

Մեծն Ներսէս՝ տիտան, հզօր եւ հազուագիւտ միտք մըն էր։ Ոչինչէն, անգոյնէն եւ քառսէն կազմեց, կազմաւորեց եւ ստեղծագործեց ան։ Մեծն Ներսէս՝ ստեղծագործ համնար մըն էր։ Իրմէ առաջ գոյութիւն չունեցող, իրմէ առաջ չիտրուած, իրմէ առաջ անտես առնուած, լքուած, փճացումի դատապար-

տուած դասակարգեր, իրեր եւ հաստատութիւններ մտահոգեցին զինքը եւ այն՝ առանց նախընթաց օրինակի, առանց բարեխրատ օգնականի եւ ամէն օր իր շինարար գործերը քանդող հազար խոչընդոտներու դէմ, ստեղծագործեց, կանգնեց եւ պահեց։ Անօրինակ հանճար մ'էր այն։ Չէ եղած մարդ մը, ժողովուրդական կեանքի մէջ մութ անկիւն մը, ամենաչնչին կէտ մը որ Մեծ Հայրապետին հոգածու խնամքներուն սուր ակնարկէն վրիպած ըլլայ, չէ եղած ցաւ մը, ընդհանուր կամ մասնաւոր դժբախտութիւն մը, որու մասին հիմնական դատեալ մը խորհելու պարտականութենէն խուսափէր ան...։ Մարգարէն զրկած էր Աստուած... բայց քարկոծող ժողովուրդը իր դէմը դիրք բռնած էր դժբախտաբար։ Հայաստան չճանցաւ ներսէսը եւ անոր նախախնայական դերը, կոչումը, պաշտօնը...։ Հայաստան դատապարտուեցաւ... քառեց իր մեղքերը, քանի մը տասնեակ տարիներ վերջ. այդ անխուսափելի էր. արդար պատահասը իր անարդար ընթացքին։

Եկեղեցական պատմութեան մեծագոյն հանճարին հրաշակերտներուն մանրամասնութեանց մէջ մտնելէ առաջ կարելի է յարել նաեւ որ, Մեծն Ներսէս օրուան փառաբանական փրկիչն ալ էր, եթէ տրուէր իրեն լայն իրաւաւորութիւն։ Կարելի՞ էր արդեօք այդ շրջանին, այդ անկումի եւ փլուզումի քառսին մէջ տխրադրութիւն մը ստեղծել։ Կարելի՞ էր արդեօք արքայական, եկեղեցական, վարչական եւ հասարակական ամէն պաշտօն եւ իրաւասութիւն յանձնել Մեծն Ներսէսին...։ ցնորք մը թերեւս այդ շրջանին տիրող մտորումներու մէջ, բայց միակ փրկութիւնը պիտի ըլլար այդ, միակ միջոցը, որով Մեծն Ներսէսի անունը ոչ միայն եկեղեցական, այլ արքայական անուանացանկերու վրայ ալ պիտի տեսնէինք փառայեղ։ Մեծն Ներսէս՝ մեր պատ-

մութեան մէջ հազուագիւտ բազմակողմանի բնատուր տաղանդով օժտուած ֆառաֆազէս, ընկերաբան, կազմակերպող եւ իր գործին յանստօրէն փառող, մահու չափ նուիրուող պետ մըն էր։ Պետ մըն էր, տիրելու, սաստելու, պատժելու, արգարութիւնը յայտարարելու համար ըստեղծուած։ Պետ մը՝ սանձելու նախարարներու, իշխաններու եւ թագաւորներու ապերսոսան, ապօրէն եւ ազգավրնաս կիրքերը, պետ մը՝ աննկատ, համակ ազգասիրութիւն, համակ կրօնասիրութիւն, համակ ուղղամտութիւն եւ համակ անկաշառութիւն բուրդ։ Անըման պետ մըն էր աստուածառաք։

Միակ բնորոշող յատկութիւնը, իր հզօր նկարագրին, զոր քննադատելու փորձ մը ըրած են այս տիտանի վրայ, սա՛ է եղած թէ՛ Մեծն Ներսէս փափկանըկատութեան եւ պատշաճութեան սահմանը չէր յարգեր, երբ կարգը կուգար՝ սաստելու, յանդիմանելու եւ սպառնալու։ Իր այդ յախուռն վարուելակերպը յաճախ շեշտուած է արքունեաց մէջ եւ թագաւորներու հանդէպ, սակայն տիրող անկազմակերպ եւ ողբալի կացութեան մը առջեւ՝ Մեծն Ներսէսի նման անդըրդուելի օսատիւ մը, խարազան մը աստուածառաք, կարծես թէ անփոխարինելի պէտք մըն էր։ Թէեւ տեղ տեղ իրաւունք ալ ունեցած ըլլան պնդողներ թէ՛ մեղմութեամբ եւ սիրաշահելու քաղաքականութեամբ ալ կարելի էր արդիւնաւոր գործունէութիւն մը ապահովել իրեն համար։

Յաջորդիւ՝ Մեծն Ներսէսի կազմակերպիչ, ստեղծագործող եւ պայքարող գործունէութեանց մասին։

Հաշայ

ՌԵՏՈՒՆԻ

ՇԱՔԱՐԸ ԵՒ ԱՆՈՐ ՍԻԱԼ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ

Շաքարը, որ մարդկային սնունդի շատ կարեւոր մէկ մասը կը կազմէ, վստահ կերպով կրնայ ըսուիլ թէ մարդերու եւ մանաւանդ երիտասարդներու եւ մանուկներու համար էն հրապուրիչ եւ էն ախորժակի ուտելիք մըն է։ Այս պատճառաւ քաղաքի մը մէջ անուշիղէն ծախող խանութներու թիւը ամէնէն աւելի արագօրէն կը շատնայ։ մարդիկ շատ մը պարագաներու առթիւ զիրար հիւրամիծարելու համար շաքարիղէն կը գործածեն։ Հազարաւոր տեսակ շաքարներ կան։ Շաքարը զանազան անուշ հոտերով, իւզով եւ օւլայով խառնուելով շատ համեղ սնունդ մը կ'ըլլայ։

Օսլան շատ շուտ շաքարի կրնայ վերածուիլ, քանզի անոնց քիմիական բաղադրութիւնները իրարու շատ կը նմանին։ Երբ կ'ըսենք թէ օսլան մեր բերնին եւ ազիքներուն մէջ կը մարսուի ըսիլ կուզենք որ ան շաքարի կը վերածուի։ Օսլան կրնայ մեղ սնուցանել եւ մեզի ոյժ տալ այն ատեն՝ երբ ան շաքարի վերածուելով ջուրի մէջ լուծելի վիճակ մը կ'ստանայ։ Եթէ կուզես այս իրողութիւնը փորձել բերնիդ մէջ կտոր մը հաց դիր, քանի մը վայրկեան առանց կլլելու զայն ծամէ, եւ պիտի տեսնես, որ բերնիդ մէջ անուշ համ մը պիտի զգաս քանի զայն ծամես։ Ասիկա կարելի եղած է լորձուքի մէջ փոխուող հայտի մը միջոցաւ, որ օսլան շաքարի կը վերածէ։ Մեր բերանը՝ օսլան շաքարի վերածող քիմիական գործարան մ'է։ Ահա այս պատճառաւ հակառողջապահական եւ հակաբնական է առանց ծամելու կլլել բերնիդ մէջի պատառը։

Շաքարը ամէնէն աւելի չարաչար գործածուող սնունդներէն մէկը եղած է, անոնց ամէնէն անուշը եւ քիմիքին համար ամէնէն ախորժահամը ըլլալուն պատճառաւ։ Մարդիկ, մանաւանդ մանուկ-

ները միշտ կը փորձուին յարմար կամ անյարմար ստեղծելու եւ պէտք եղածէն աւելի ուտելու զայն: Չափահասները աշխարհիս ամէն կողմը միշտ սովորութիւն ըրած են շաքարը սխալ կերպով գործածել՝ պղտիկներուն հաճոյք պատճառելու եւ անոնց բարեկամութիւնը չահելու համար: Բարեկամները եւ ծնողները, որոնք կերակուրէն առաջ պղտիկներուն մի քանի կտոր շաքար տալով անոնց ախորժակը կը խափանեն, պէտք է միշտ մտաբերեն որ զանոնք պիտի զրկեն իրենց համար կենսական եղող ուրիշ կերակուրներէն: Շատ մը ունեւոր ընտանիքներու մէջ, հակառակ սննդեղէնի առատութեան, անարիւն եւ տկարակազմ մանուկներ կը գտնուին. կը կարծենք թէ ասոր պատճառներէն մէկը պէտք է փնտռել անյարմար ատեններուն անոնց շաքար ուտելուն մէջ, որ զանոնք կը զրկէ ուրիշ կենսական սննդանիւթի ատենէ: Մեծ հայրերը եւ մեծ մայրերը այս առթիւ պէտք չէ մոռնան թէ այն շաքարները, զորոնք երկար ատենէ ի վեր իրենց չմտքբուած գրպաններուն մէջ պահած են, իրենց սիրելի թոռնիկներուն տալով անոնց հետ խառնուած շատ մը միքրոպներ եւ կուտան:

Շաքարը մանուկներու կեանքին մէջ կենսական կարեւոր դեր ունի, ինչպէս որ վերը յիշուեցաւ: Այն մանուկները, որոնք իրենց ծնողներուն անհոգութեան եւ տգիտութեան պատճառաւ անկանոն պէտք եղածէն աւելի շաքար, լոգում, չոքուած կ'ուտեն, յաճախ... էքզիմա (սուլուճա) եւ էքթիմա (չազմագ չըպանը կոչուող մորթի հիւանդութիւններու կ'ենթարկուին: Մարդկային կաթը ամէնէն շատ շաքար պարունակող կաթն է: Հետեւաբար այն ծծկեր մանուկները որոնք իրենց ամէն լացին կը զիւցուին իրենց մայրերուն կողմանէ՝ պէտք եղածէն աւելի շաքար կ'առնեն եւ յիշեալ մարթի հիւանդութեանց ենթար-

կուելու վտանգին մէջ կը գտնուին: Ամառնային փորհարութիւններ, աշիքի բորբոքումներ շատ դիւրութեամբ յառաջ կուգան այսպիսի մանուկներու մէջ:

Այս առթիւ կ'ուզենք յիշել տակաւին մեր երկրին մէջ գործածական բայց քննադատելի սովորութիւն մը, որուն համեմատ թաշկինակի մը ծայրին մէջ երախաներսւն յոգում կուտան ծծելու համար: Այս յոյժ դատապարտելի կերպի միջոցաւ պղտիկները խաղաղեցնելու կը ջանան: Շատ յայտնի է որ այս կերպով թէ պէտք եղածէն աւելի շաքար թէ շատ մը միքրոպներ պղտիկին ստամոքսը մուտ կը գործեն: Անուշ ծրծող պղտիկները ընդհանրապէս գէշ տեսակէն ամառնային փորհարութեան կ'ենթարկուին, որ յաճախ մահով կը վերջանայ, ինչպէս որ ամէնուն ծանօթ է:

Շաքարը ճանճերուն ալ շատ հրապուրիչ եւ անուշնիւթ մըն է, ինչպէս որ է մարդերու համար: «Ճանճը կը ճանչնայ շաքարովաճառը», կ'ըսէ առածը: Սնունդներու մէջ բացը գրուած անուշեղէնները խնջոյքի վայրեր են ճանճերուն համար, որոնք իրենց բերաններովը, թւերովը ու ոտիկներովը միլիօնաւոր պիղծ մանրէներ կը զետեղեն անոնց վրայ: Հետեւաբար առանց գիտնալու զանոնք հաճոյքով ուտող մանուկ մը կըրնայ մի քանի օր վերջը ժանտաւանդի (թիֆ), թանջի (տիզանթէրի) եւ ուրիշ հիւանդութիւններու ենթարկուի:

Պէտք է յիշել նաեւ սա իրականութիւնը՝ թէ յարմար կամ անյարմար ատեններուն պէտք եղածէն աւելի շաքարեղէն ուտելու սովորութիւն ունեցող մարդուն ազնաները վաղահաս փտութեան դատապարտուած են: Պատճառը այս է. շաքարը մանրէներու միջոցաւ շատ շուտ կը խմորի եւ քացախի կամ ուրիշ թթու նիւթերու կը վերածուի. այնպէս որ բերնին մէջ տեսականօրէն անուշեղէն

մնացորդներ ունեցող մարդուն բերնին հեղուկը քիչ շատ թթու վիճակի մէջ կը գտնուի. մինչդեռ բնականոն լորձուէքը կալաքարային (թթուին հակառակը) լուսով բերնի առողջապահութեան համար անիկա պէտք է որ միշտ կալաքարային մնայ: Քանզի թթո ները ակռաներու ոսկրային մասը գիւրութեամբ կ'ուտեն և փոսիկներ յառաջ կը բերեն, որոնց մէջ մանրէները բոյն կը շինեն և ակռաներու փտութեան պատճառ կը դառնան:

Ուրեմն պէտք է ուշադրութեան առնել հետևեալ կէտերը. 1) Շաքարը պէտք է ուտուի պէտք եղած չափով եւ որոշ ժամանակներուն մէջ, ընդհանրապէս ճաշերէն վերջ: 2) Ճաշէն առաջ մանուկին չաքար մի' տար, քանզի ախորժակը կը խափանի եւ չի կրնար ճաշել: 3) Մայրերը պէտք է կատարելապէս մոռնան պղտիկներուն անուշ ծծել տալով զանոնք խաղաղեցնելու սովորութիւնը: 4) Պղտիկներուն մի' նուիրեր այն շաքարները որոնք ճանճերու կողմէ պըղծուած են: 5) Մի' մոռնար բերանդ լուալ անուշեղէն ուտելէ վերջը:

Հարկ

(ՏՈՒԹ.) Ա. ԺէՊէճեան

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԷԿ ՏԱՐԻ ՈՒՆԻ

Ժամացոյցի գործարանի մը մէջ հիւր կիներ, որոնք մինչեւ հիմա մեռած են կամ մօտ օրէն մեռնելու դատապարտուած, ժամացոյցի թուատախտակներու կելով կ'զբաղէին րատիումի ներկով: Իրենց այս աշխատանքին միջոցին, իրենց վրձիններուն ծայրը կը սրէին իրենց շրթներովը, և այս կերպով մահացու ախտով մը կը վարակուէին: Անոնցմէ մէկը Տիկ. Հըսմէն իր վտանգաւոր վիճակին դապէս զիտակից եղաւ: Ամիսներէ ի վեր անիկա անհանգիստ էր. իր տան բժիշկը ըսած էր իրեն թէ մտահոգուելու

չափ լուրջ հիւանդութիւն մը չունի ինք, իրեն պէտք եղածը միայն կերակուրի փոփոխութիւն և քիչ մ'ալ բժշկական դարմանում մ'էր և արագ ապաքինում մը իոս ուցած էր: Ասիկա ճիշդ կը նմանի հոգիի հիւանդութեան — մեղքի — սխալ ախտաճանաչումին, ինչ որ շատ մը անարժէք բժիշկներ այսօր կ'ընեն մեղաւորներու համար: Անոնք կ'ըսեն. «Մեղքը լուրջ բան մը չէ. քու մէջդ արմատական չարիք մը չկայ»:

Բայց գիշեր մը երբ իր գեղը առնելու համար արթնցաւ մեծ հայելիի մը մէջ տեսաւ իր իսկական վիճակը. հառաչանք մը ելաւ իր շրթներէն, քանզի հայելիի մէջ ան տեսաւ որ ստուերանման լոյս մը կը ճառագայթէր իր մարմինէն: Իր մազերը և մարմինը մութին մէջ կը փայլէին. գետինը փռուեցաւ. գիտցաւ թէ ստոյգ մահուան դատապարտուած էր:

Ինչ գեղեցիկ կերպով կը պատկերացընէ այս մեղքի անբուժելիութիւնը և սարսափելիութիւնը: Մարդիկ երկար տտեն խաբուած են մեղքի հիւանդութեան բնութեան մասին: Ճշմարտութիւնը պատմէ անոնց: Ըսէ անոնց թէ մինչեւ որ Յիսուսի չգան, յաւիտենական մահուան ճամբուն վրայ կը գըտնուին:

ԻՆՉՈՒԻ ԶՓՈՐՁԵԼ...

Ամերիկացի խմբագիր մը հովիւէ մը նամակ մը կը ստանայ, որով վերջինը կը յայտնէ թէ եկեղեցիին հիւսնաքարէն եղ վիճակի մը մատնուած է, ժողովներու մասնակցողներուն թիւը պակսած է, աւետարանչական գործին համար հետաքրքրութիւնը շատ տկարացած, աղօթած ժողովները գործնականապէս դադարած են չմասնակցողներուն պատճառաւ, և այլն: Հովիւը կը գրէ նաեւ թէ ժողովըրդային երգահանդէսներով, զրական և թատերական գործունէութեամբ տօնավաճառներով, երիտասարդաց ժա-

մանցի հաւաքոյթներով, շաբաթական պարերով աշխատած էին ժողովրդին հետաքրքրութիւնը արթնցնել, բայց չէին յաջողած: Եւ կը խնդրէր խմբագիրէն որ բարեհաճի այս մասին թեւադրութեամբ մը իրեն օգնել: Խմբագիրը կը պատասխանէ քարդ փօստակի մը վրայ այսպէս գրելով. «Ինչո՞ւ չփորձել կրօնքը»:

ԱՌԱՆՑ ՆԱԽԻ ՈՎԿԻԱՆՈՍԸ ԱՆՑՆԻԼ

Օր մը երեք մարդիկ քարոզչի սապէս հարցուցին. «Դուք կը կարծէ՞ք թէ առանց եկեղեցիին անդամակցելու երկինք երթալ կարելի է մէկու մը համար»:

«Կը կարծեմ թէ կրնայ» պատասխանեց քարոզիչը. մարդիկ քարոզչին կռնակը շոյեցին, ու զայն լայնամիտ կռչեցին: «Ես ալ ձեզի հարցում մը ընեմ, և կ'ուզեմ որ դուք ալ ինծի չափ արագ պատասխանէք ինծի. «Դուք ինչո՞ւ կ'ուզէք այդ ճամբով երկինք երթալ»:

Հարցուց քարոզիչը, որուն չկրցան պատասխան մը տալ: «Ինչո՞ւ ինծի ուրիշ հարցում մը չէք ընեք. ինչո՞ւ չէք հարցնիր թէ արդեօք Լիվրփուլէն Նիւ Եօրք առանց նաւի ճամբորդել կարելի չէ՞». կրկին հարցուց քարոզիչը: «Այո, կ'ուզենք հարցնել. ինչ է անոր պատասխանը», ըսին երեք մարդերը: «Ես երբեք արդիւք մը չեմ տեսներ մարդու մը Լիվրփուլէն Նիւ Եօրք առանց նաւի գալուն համար, պայմանաւ որ այն լաւ լողացող մ'ըլլայ. պէտք եղած ուտեստը հետը առած ըլլայ, ալիքներուն դէմ գնելու համար բաւական ոյժ ունենայ, շահաձուլի մը որս չերթայ: Բայց ենթադրէ որ առանց նաւի կրցաւ երթալ, կը խորհի՞րք թէ ան աւելի հանդիստ կերպով պիտի կրնայ հասնիլ քան այն որ նաւով կը ճամբորդէ»:

ԱՅՑԵԼՈՒ ՄԸ ՁԷ ԱՅԼ ԲՆԱԿԻՉ ՄԸ

Ուսյթ Կղզիին մէջ (Մանչի Մովը) արքայական բնակարանին մօտ ապաստարաններ կային: Մարդ մը անոնցմէ մէկը այցելած տեսն տարիքոտ կնոջ մը հարցուց թէ Վիգթորիա Թագուհին երբէք կ'այցելէ՞: «Այո», նորին Վեհափառութիւնը զիս տեսնելու կուզայ», պատասխանեց ծեր կինը: «Թագաւորն երբեք Թագաւորն ալ ձեզ հոս կ'այցելէ՞», հարցուց այցելուն: «Ո՛չ, Տէր, անիկա չայցելեր, Անիկա հոս կը բնակի»:

Աստուած քու սրտիդ, քու տանդ, քու եկեղեցիիդ տեւական բնակի՞լն է:

ԿԻՆ ՄԸ ՈՐ ՅԻՍՈՒՍԸ ԿԸ ՃԱՆՁՆԱԼ

Ձինաստանի մէջ բժիշկ միսիօնար մը տիկին մը տեսաւ որ ճամբուն եզերքը կը պառկէր ծանր հիւանդ վիճակի մէջ: Հիւանդը վերցուց եւ աթոռի մը վրայ դրաւ անիկա, և 50 մղոն հեռու եղող հիւանդանոց մը ղրկեց: Ուրիշ միսիօնար մը հիւանդանոցի մէջ սկսաւ Յիսուսի մասին խօսիլ նորիկ հիւանդին, որ ժպտելով միսիօնարին նայեցաւ եւ «Ես կը ճանչնամ այդ Յիսուսը, անիկա զիս վերցուց, աթոռի մը վրայ դրաւ և ըսաւ. «Մայր, ևս քեզ հիւանդանոց կը ղրկեմ»:

Ես կը ճանչնամ այդ Յիսուսը»:

Ահա այսպէս մենք բարձր առանձնաշնորհումը ունինք Քրիստոսը ներկայացնելու, ուրիշներու պէտքերուն ծառայելով:

ԴՈՒՐԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Այս տարուան կարեւոր դէպքերէն պէտք է նկատել Երուսաղէմի Պատրիարքական Աթոռին արժանի գահակալին, Տ. Տ. Նղիշէ Արքեպիս. Դուրեանի, քահանայութեան յորելեանը: Յորելեարը իր յիսնամեայ քահանայութեան միջոցին իր բազմակողմանի գործունէութեամբ և անբաւիր կեանքովը բոլոր

հայութեան սիրելի դարձած էր, որ ա-
մէն տեղ փութաց իր անվերապահ զը-
նահատու մը և յարգանքը յայտնելու իր
մեծ դաստիարակին, ներշնչող ու վերա-
ցընող քարոզիչին, ներհուն իմաստասէ-
րին և խորունկ բանասէրին: Գուրեհանի
յիշատակը յաւերժացնելու համար ձեռ-
նարկուած է մատենադարանի մը շի-
նութեան Ս. Յակոբայ վանքին մէջ.
արժանի կոթող մը բազմավաստակ զոր-
ծիչին: Մեր սիրալիր յարգանքը և զը-
նահատումը յայտնելով հանդերձ կը
կը մաղթենք որ Ս. Աթոռը անոր միշտ
արժանի յաջորդներ ունենայ:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՊՍԴԱՅ ՕԹՕՆ

Ներկայ ամենակատարեալ ինքնա-
շարժը սայլի մը տեսքը պիտի պարզէ
ապագայ կառքին քով, կ'ըսէ մասնա-
գէտ մը:

Ապագայ կառքը ապահով կերպով
մէկ ժամուան մէջ 100 մղոն պիտի ճամ-
բորդէ, միայն 360 հոգա ծանրութիւն
պիտի ունենայ և շատ քիչ վառելիք
պիտի սպառէ: Գաղտնիքը հոս է. Նոր
մետաղ մը, որ կատարելագործուելու
վրայ է, պողպատէն 15 անգամ աւելի
զօրաւոր եւ ալիւմինումի մէկ երրորդ
ծանրութեամբ, կարելի կ'ընէ այս ձեռ-
նարկը:

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՊՈՒԷՆՕՍ ԱՅՐԷՍԻ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Հետեւեալը կ'ը քաղենք Պուէնոս
Այրէսի Հայ Աւետ. Եկեղեցիին կողմանէ
ղրկուած նամակէ մը:

Հայերու դէպ ի Արժանթին զանդ-
ուածային գաղթը սկսած է ասկէ վեց

տարի առաջ: 1923ին Պուէնոս Այրէս
հասան Կ. Պուէն և Սուրիայէն երեք
գաղթային խումբեր, որոնց մէջ կարեւոր
թիւով բողոքականներ ալ կային: Աս
վերջիններէն աղօթասէր և հոգեւոր մի-
քանի անհատներ մէկտեղ զալով ձեռ-
նարկեցին աղօթաժողովներ ձարքելու:
Տէրը այս անկեղծ ջանքերը օրհնեց, ժո-
ղովականներու թիւը աւելցաւ և նոր ա-
պաշխարողներ եղան: Գործին առաջին
ձեռնարկողներէն մէկը կ'առաջարկէ այս
կազմակերպութիւնը կոչել Հայ Աւետ.
Եկեղեցի, իսկ ուրիշ մէկը՝ Հայ Աւետ.
Եղբայրութիւն: Ժողովականներէն զօ-
րաւոր հատուած մը փափաքեցաւ առա-
ջին անունը ընդունիլ, բայց երկրորդ
անունը առաջարկող եղբօր աղաչանքին
վրայ որոշուեցաւ Հայ Աւետ. Եղբայրու-
թիւն անունը ընդունիլ:

Մի քանի տարիներ անցան. Բող.
եղբայրները սպասեցին որ օր մը այս
կազմակերպութիւնը, որ Հայ Աւետ.
Եղբայրութիւն անունն կը կրէր պիտի
կոչուէր հինէն ի վեր ծանօթ Հայ Աւետ.
Ժողովական Եկեղեցի անունով: Բայց
թէ Ժողովներուն մէջ և թէ ուրիշ պա-
րագաներուն առթիւ այս մասին յայտ-
նուած փափաքները, առաջարկները,
ակնարկումները ու թելադրութիւնները
ուժգին ընդդիմութեան բաղխեցան թէ՛
Բողոքական համայնքին պատկանող
կարգ մը եղբայրներու և թէ՛ Լուսաւորչա-
կան Եկեղեցիի պատկանող բայց զործնա-
կանապէս անկէ բաժնուող հոգեւորներու
կողմանէ: Անոնք ասպէս արտայայտ-
ուեցան. «Մենք Բողոքական չենք.
Բողոքական Եկեղեցիէն չատնեց բաժ-
նուած ենք. ուզողը հոն թող մնայ, ու-
զողը թող անկէ բաժնուի. Բողոքական
եկեղեցին մեռած է:» Իսկ Լուսաւոր-
չական հոգեւորները ըսին թէ իրենք չեն
ուզիր Բող. Եկեղեցիին միանալ: Ասով
չզոհացան. քիչ վերջը Սուրիոյ և Ամերի-
կայի բոլոր Հայ Բող. հովիւները և քա-

րողիչները այնպէս ներկայացուցին թէ անոնք արդիապաշտ, անհաւատ, Սուրբ Գիրքը իբր Աստուածաշունչ չընդունող մարդիկ են: Անոնք սկսան իրենց պէս չխորհողներուն հանդէպ պաղ վերաբերում ցուցնել, և նոյնիսկ զանոնք վարկաբեկել յաշս ուրիշ եղբայրներու: Հոգեւոր ժողովները դադրեցան օրհնութիւն մ'ըլլալէ. ժողովի խորհրդակցութիւնները անձնական խնդիրներու շուրջ սկսան դառնալ, իսկ ընդհանուր խորհրդակցութիւնները բոլորքած զգացումները արտայայտելու ծառայեցին:

Այսպիսի կացութեան մը մէջ Հայ Աւետ. ժողովական Եկեղեցիի ջատագովներս ասկէ վեց ամիս առաջ Հայ Աւետ. եղբայրութենէն զատուելով կազմեցինք ժողովական Եկեղեցին, թէ մեր եւ թէ մեզի համակարծիք չեղողներու հոգեւոր կեանքը զարգացնելու, համադրելու խաղաղ միջոցով զԱստուած պաշտելու, առանց գայրակողութեան պատճառ ըլլալու մեր ազգակիցներուն մէջ Քրիստոսի Աւետարանը քաղցր կրեւնալու համար: Մեր ժողովուրդը կը կազմեն 50-60 անհատներ, որոնց մօտ երեսունը հոգեւորներ են: Առժամապէս քարոզչութեան հրաւիրեցինք Տիար Յովհաննէս Հալէպլեանը, որ ընդունելով մեր հրաւերը կ'առաջնորդէ մեզի մեր հոգեւոր ժողովներուն մէջ:

ՔէՕՐՔԻԼՆԷԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԷՆՔԸ

Քէօրքիւնէի Հայ Աւետ. Եկեղեցիին հովիւը Վեր. Ա. Պէրպէրեան կը գրէ թէ այս տարի 60-62 աշակերտներ կը յաճախեն Քէօրքիւնէի դպրոցը, ուր կը պաշտօնավարեն երկու վարժուհիներ:

Հոկ. 11ին դպրոցական նոր շէնքին հիմնարկէքը կատարուած է ժողովուրդային խանդավառութեան մէջ, բոլոր ներկաները և մանաւանդ մանուկները մասնակցած են դպրոցին ի նպաստ

հանգանակութեան մը, որ 20 օսմ. ոսկիի հատած է: Մինչեւ հիմա շէնքին համար ծախսուած գումարը եղած է 145 օսմ. ոսկի, որուն 25 ը տրուած է Հ. Բ. Ը. Միութենէն: Բայց տակաւին պէտք ունին կարեւոր գումարի մը շէնքը լըրացնելու համար:

ԱՍՈՐԻ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

Հալէպի մէջ նախկին Ուրֆայի Ասորի Աւետ. Եկեղեցին կազմակերպական կարեւոր քայլ մ'առաւ Դեկ. 1, կիրակի իրիկուան հաւաքով թովը, ուր քսանի մօտ նախկին անդամներ և 4 նոր անդամներ (երկուքը կին), Ազիլիէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ Կրօնական ժողովին անդամները, և քաղաքի Պօրտի միսիօնարները Ս. Հաղորդութեան մասնակցեցան: Վեր. Կ. Յարութիւնեան հաղորդութեան պաշտօնը կատարեց և Տր. Ճ. Մէրլէ քարոզեց: Այսպէս Ասորի Աւետ. Եկեղեցին պաշտօնապէս կազմակերպուեցաւ 25ի մօտ անդամ և անդամուհիներով:

Ի ՊԱՏԻՒ Ք. ՊՕՆԱՐԻ

Զուրիցերիացի հայասէր փառթէօր Քրաֆթ Պօնարի Հալէպի այցելութեան առթիւ Առաջնորդարանի կողմանէ թէյյասեղան մը սարքուած էր, ի պատիւ մեծանուն հիւրին: Աւետարանական եկեղեցիին կողմանէ ներկայ գտնուած են Վեր. Կ. Յարութիւնեան, Վեր. Ա. Շիրաճեան, Տօքթ. Ա. ճէպէճեան և Տօքթ. Ֆ. Յովնանեան:

ՔՆՆԱԿԱՆ ՊՏՈՅՏ

Սուրբիոյ Հայ Աւետ. Միութեան Հալէպի Շրջանային Կոմիտէին հրաւերով Մր. Հ. Րիկզ և Մր. Էտքինզ քննական պտոյտ մը կատարեցին Հալէպի Շրջանին եկեղեցիներուն մէջ Հոկտեմբեր ամիսը:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնագիտական Չարս Տիգրանի
գրադարանի

ԳԼՈՒԽ Բ.

Դուռը բացուեցաւ. և տղայէն փոքր ազնիւ մը ներս մտաւ, ու անմիջապէս տղուն քով վազկով անոր վրայ փաթ-թուեցաւ, և զայն համբոյրներով ծածկեց միշտ «Եղբայր իմ, անուշիկ եղբայր իմ», պոչելով, «Ես եկեր եմ որ տուն տանիմ, սիրելի եղբայր», ըսաւ փոքր ազնիւն, ուրախ ժպտով մը:

«Տո՛ւն, ի՞նչ աղէկ», պատասխանեց տղան:

«Այո», ըսաւ ազնիւն, ուրախ դէմքով, «Տուն պիտի երթանք, և ասկէ ետքը դուն ալ մեզի հետ երջանիկ պիտի ըլլաս հոն, մեր հայրիկը հիմայ առաջունէ շատ աւելի բարեսիրտ է, և մեր տունը դրախտի կը նմանի, երէկ իրիկուն իմ հետս շատ քաղցրութեամբ խօսեցաւ. ես ալ համարձակութիւն առնելով խնդրեցի իրմէն որ հրաման տայ և դուն տուն գաս, չը մերժեց նոյն իսկ զիս կառքով հոս զրկեց որ քեզ տուն տանիմ: Այ հոս չը պիտի գաս, բայց խորհէ, ինչ հաճելի ժամանակ մը պիտի անցնենք միասին մեր տունը, այսօր Ծնունդ է, և ես իմ բոլոր կրցածս պիտի ընեմ որ իմ սիրելի եղբայրս հաճոյք զգայ»:

«Տիկինն մը պէս կը խօսիս, Ֆէնի՛», ըսաւ տղան:

Ու քոյրը եղբօրը ձեռքէն բռնած, սիրտը ուրախութեամբ լի, առաջնորդեց զայն դպրոցի սրահէն դուրս: Քանի մը վայրկեան վերջ գիւրեմք տղան տանող կառքը սրաքշաւ կ'ընթանար ձիւնապատ փողոցներէն, դէպի տուն, դէպի ծըննդեան ուրախ բնակարանը:

«Ինչ փափուկ սիրտ մ'ունի, կարծես թէ մէկ շունչով պիտի թառամի»,

ըսաւ Ոգին, «սակայն ի՞նչ վեհանձն հոգի մը սիրով լի»:

— Ծշմարիտ է, պատասխանեց Սքրուճ, չափազանց շատ կը սիրես զիս: «Ահա՛ս ատենը ամուսնացած էր, և զաւակներ ունէ՞ր» հարցուց Ոգին:

«Սխալն մէկ տղայ ունէր», պատասխանեց Սքրուճ:

«Հա՛, քիտորովո՞ղ», ակնարկեց Ոգին:

«Այո», և Սքրուճ սկսաւ նորէն անհանգիստ ըլլալ...

Ոգին և Սքրուճ այժմ փողոցին մէջ էին, ու յայտնի էր որ ամէն կողմ Ծնունդի ուրախութեանց արատայայտութիւնը կը տեսնուէր, խանութներու ցուցափեղ-կերը: Նուէրի յարմար առարկաներով լեցուն էին, մարդիկ իրենց նոր զգեստնե-րը հագած, ամէն բան հաճելի, ամէն ոք երջանիկ արամաղորութեամբ լի:

Ոգին յանկարծ կռնդ առաւ վաճառատուններէն միոյն առջև, դառնալով Սքրուճին և «Այս տեղը զիտե՞ս», հարցուց:

«Ո՛հ», զոչեց Սքրուճ, «ասիկա մեր աշակերտ եղած տեղն է»: Ներս մտան: Երկայնահասակ նիհար մարդ մը ավոտով մը վրայ բազմած կը զրէր:

«Վայ, իմ ծերուկ Ֆէզզի՛նս, իմ սիրելի վարպետս, նորէն ողջնցեր է», դուչեց Սքրուճ:

Ծերունի Ֆէզզին զրիչը վար դրաւ, պատի ժամացոյցին նայեցաւ, ժամը եօթն էր. ձեռքերը չփեց, բաճկոնակը շտկեց, թիթեւ ու զոհ սրտով մը ինքն իր վրայ խնդաց, ու զուարթ ձայնով մը կանչեց «է՛յ, տղա՛ք, էպէնէզէ՛ր, Տի՛ք, ո՛ւր էք»:

(Շարունակելի) (11)

صاحب الامتياز و مدير المسئول

قيس قردبته هاروتونيان